վնաս գործեցին՝ ոչ միայն աշխարհականաց այլ եւ եկեղեցականաց, կողոպտելով զարարս նոցա. եւ միանգամայն աւելի քան 100,000 բիզանդաց ոսկւոյ առին աւար, (աւելի քան զմիլիոն ֆրանքաց): Ոչ յիշի թէ ո՛ւր էր յայնժամ կոմսն, անուանեալն Դ Պեմունդ, եւ զի՞նչ արար: Ի թղթի իւրում կշտամբէ Իննովկենտ զԼեւոն եւ վասն դրժելոյ պայմանի հաշտութեանն՝ յառաջ քան զվճարել ժամադրութեանն, եւ վասն մերժելոյն զնորընտիր արքեպիսկոպոսն Տարսոնի, եւ զոռճիկ նորա՝ զօրականաց իւրոց բաշխելոյ. նոյնպէս եւ վասն առ ոչինչ գրելոյ զբանադրանսն՝ որ վասն յափշտակութեան ընչից եւ կալուածոց Տաճարականաց: Եւ դարձեալ խրատէ, աղաչէ, յորդորէ ’ի բաց կալ յայսպիսի գնացից[192], եւ դարձուցանել նոցա զստացուածսն, նոյնպէս եւ առ պատրիարքն Անտիոքայ. իսկ եթէ դարձեալ անլսող լիցի՝ պատուէր տուեալ է պատրիարքին Երուսաղեմի եւ արքեպիսկոպոսին Տիւրոսի՝ կրկին ընդ բանիւ առնել զնա եւ զՌուբէն եւ զզլխաւորս ’ի խորհրդականաց նորին, նոյնպէս եւ առ թագաւորս Երուսաղեմի եւ Կիպրոսի եւ առ այլ պարոնայս գրեալ է, զի զգուշացին ’ի նմանէ եւ գուն գործեսցեն դարձուցանել առ ասպետսն՝ զստացուածս նոցին:– Ի ժամանակի աստ երեսդարձութեան Լեւոնի ’ի Լատինաց՝ թուի խստիւ արգելեալ նորա, զի մի' ոք յօտարաց մտցէ եւ ելցէ յերկիր իւր՝ առանց իւրոյ հրամանագրի, որպէս ծանուցանէ որ յայնմ ժամանակի (1211-2) եկն առ նա հիւր՝ կանոնիկոսն Վիլլեպրանտ[193]:– Յառաջնոց թղթոցն քաջայայտ փայլէ յատուկ իմն գորով Քահանայապետին Իննովկենտեայ ’ի Լեւոն, վասն միաբանութեանն ընդ եկեղեցւոյ իւրոյ, եւ վասն զօրութեանն՝ յորմէ ակն ունէր ոչ փոքր օգնութիւն գտանել Խաչակրաց. յայտ ուրեմն է զի բռնադատութեամբ եւ ոչ հաճութեամբ գրէր զայսոսիկ, որպէս եւ ինքնին ’ի սկզբան թղթոյն խոստովանի, ակամայ եւ տրտմութեամբ զլանալ նմա զառաքելականն ողջոյն եւ զօրհնութիւն[194]. սակայն յետ հնգից լոկ աւուրց (27 մարտի, 1213) վաւերացուցանելով զտուրս Ամուտայ բերդի ’ի Լեւոնէ առ Տեւտոնեան ասպետս, անուանէ զնա ’ի գրին՝ ըստ սովորականին՝ ամենասիրելի որդի իւր եւ պայծառափայլ թագաւոր Հայոց, եւ բարեպա-

192 Serenitatem tuam monemus, rogamus et exortamus in Domino, etc.

193 Ita ut hospes, si terram intraverit, absque regia bulla exire non possit.– **Willebrand**.

194 Invite ac dolenter tibi negamus apostolicæ salutationis et benedictionis alloquiam.